

**ԼԱ ԳԱՆԻԱՏԱՅԻ ԵՒ ՔՐԷՏԵՆՔԱ ՅՈՎԻՏԻ ՅԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՄԻՋԻՆՔԻ ՓՈՔՐԻԿ ՅԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ, ՅՍԿՈՒՄԻ ԱԲԱՐՏԻՆ**

Չորեքշաբթի, Մարտ 10-ին, 2010, Լա Գանիատայի եւ Քրէտէնթա Յովիտի Յայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարանը (*Տնօրէնուհի՝ Օրիորդ. Աղաւնի Աշըգեան*) կազմակերպած էր Միջինքի հիւրասիրութիւն մը Յսկումի ժամերգութենէն ետք:

Լա Գանիատայի Ծուխի Յոգեւոր Յովիւր՝ Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քինյ. Յակոբեան, Մեծ Պահոց շրջանին ամէն Չորեքշաբթի եւ Ուրբաթ կը կատարէ Յանգստեան եւ Խաղաղական ժամերգութիւններ: Յսկումի այս ժամերգութիւններուն ներկայ կ'ըլլան նաեւ Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտները, որոնք կ'արտասանեն Սուրբ Ներսէս Շնորհալի Յայրապետի «*Հաւատով Խոստովանիմ*» աղօթքէն որոշ տուններ:

Յսկումի ժամերգութեան իր մասնակցութիւնը կը բերէր Բրշ. Վարագդատ Սրկ. Բարսեղեան: Միջինքի ատեն Յսկումի ժամերգութեան նոյնպէս Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտները բերին իրենց ջերմ մասնակցութիւնը, որ խանդավառեց ներկայ հաւատացեալները: Միջինքի մասին խօսելու համար հրաւիրուած էր Առաջնորդարանի աշխատակից Յայկ Մատոյեան, որ գեղեցիկ եւ հանգամանալից կերպով ներկայացուց նախ Մեծ Պահքին Խորհուրդը եւ արժէքը, ապա բացատրութիւններ տուաւ Միջինքի իմաստին մասին:

Տէրունական աղօթքէն առաջ Տէր Յայրը իր շնորհակալութիւնը յայտնեց Յայկ Մատոյեանին պարզ եւ հասկնալի բացատրութիւններուն համար, ապա գնահատեց Կիրակնօրեայ Վարժարանի Տնօրէնուհին եւ Ուսուցչուհիները՝ իրենց հրաշալի աշխատանքին համար, ապա իր օրհնութիւնը բաշխեց մասնաւորաբար Տիկին Սէկի Բարսեղեանին եւ Տիկին Սօսի Կարապետեանին, ինչպէս նաեւ մի քանի այլ տիկիններուն, որոնք Միջինքի Պահքի ճաշերը պատրաստած էին եւ այդ օրը հիւրասիրեցին ներկաները:

Յսկումի ժամերգութիւնը աւարտեցաւ Կիրակնօրեայ Վարժարանի աշակերտներուն եւ հաւատացեալներուն միասնաբար արտասանուած «Յայր Մեր» Տիրունական աղօթքով: